ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ ԱՇԽԱՏԱՍԵՆՅԱԿԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀԱՅՏԵՐ՝ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

17.12.2021 21:04

Հարգելի փաստաբաններ,

ՀՀ փաստաբանների պալատի երիտասարդական խորհուրդը հայտարարում է **Երիտասարդ փաստաբանների աջակցման ծրագրով** նախատեսված աշխատասենյակից՝ 2022 թվականի հունվար-հունիս ժամանակահատվածում օգտվելու համար **հայտեր** ներկայացնելու ժամանակահատված:

Աշխատասենյակից օգտվելու հայտերն ընդունվում են 2021թ-ի դեկտեմբերի 17-ից մինչև դեկտեմբերի 27-ը ներառյալ: Հայտերը կարող են ուղարկվել էլեկտրոնային փոստով (ստորագրված և սկանավորված տարբերակով) **info@advocates.am** էլ. հասցեին, ինչպես նաև կարող են ներկայացվել յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 10:00-ից մինչև 17:00-ը, ՀՀ, ք. Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ հասցեում:

Ծրագրով սահմանված պահանջներին համապատասխանող հավակնորդների հետ կիրականացվի հարցազրույց: Հարցազրույցը կանցկացվի 2021 թվականի դեկտեմբերի 28-ին, ժամը 15:00-ից սկսած՝ հայտատուների հետ նախապես համաձայնեցված ժամին:

Ծանուցում

Երիտասարդ փաստաբանների աջակցման ծրագրի իրականացումն ուղղված է Երիտասարդ փաստաբանների մասնագիտական ոլորտում ինտեգրման գործընթացին աջակցելուն, որը ՀՀ փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդի նպատակներից մեկն է:

Երիտասարդ փաստաբանների աջակցման ծրագրի շրջանակներում ՀՀ փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդի կողմից ընտրված փաստաբանները հնարավորություն կստանան իրենց աշխատանքային գործունեությունն իրականացնել ք. Երևան, Զաքիյան 7-2, 2-րդ հարկ, թիվ 9 սենյակ հասցեում գտնվող աշխտասենյակում, որը տրամադրվելու է անվճար: Միևնույն ժամանակ, հասարակությանն անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու նպատակով, Աշխատասենյակն օգտագործելու ժամանակահատվածում, յուրաքանչյուր Շահառու կիսամյակի ընթացքում պետք է Հանրային

պաշտպանի գրասենյակի առաջարկով անվճար իրավաբանական օգնություն տրամադրի քաղաքացիներին՝ ՀՀ փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդի կողմից հաստատված ընթացակարգով սահմանված կարգով և քանակով:

Երիտասարդ փաստաբանների աջակցման ծրագրի պայմանների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն կարող եք ստանալ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի՝ 07.06.2017թ. թիվ 148-Լ որոշմամբ հաստատված **Երիտասարդ փաստաբանների աջակցման ծրագրից** և ՀՀ փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդի 21.06.2017թ. թիվ 1-Լ որոշմամբ հաստատված **Աշխատասենյակից օգտվելու ընթացակարգից**:

Հիշեցնենք, որ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի երիտասարդական խորհուրդը հասարակական հիմունքներով գործող խորհրդակցական մարմին է, որը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 11.11.2013թ. թիվ 39-Լ որոշմամբ և որի գլխավոր նպատակներից է Երիտասարդ փաստաբանների մասնագիտական ոլորտում ինտեգրման գործընթացին աջակցելը, Երիտասարդ փաստաբանների մասնագիտական գործունեության ընթացքում առաջացած խնդիրների վերհանումը և դրանց լուծման նպատակով ծրագրերի իրականացումը:

Հայաստանի Հանրապետության

փաստաբանների պալատի

երիտասարդական խորհուրդ

Բեռնել Աշխատասենյակից օգտվելու համար հայտի ձևը.

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })